



Լևոն Շանթ

Լեռան աղջիկը

ՆՈՒԱԳ ԱՌԱՋԻՆ

Վիպերգ

ԴԷՊԻ ԳԵՂԱՐԴԻ ՕՊԱՆ

Լեռան՝ը, սէ՛գ լեռներ, ես կսիրեմ ձեզ,

Կսիրեմ բուռն ու անգուսպ սիրով.

Հպարտ գագթնիդ՝ հսկաներ կարծես՝

Ո՛ւժ կներշնչեն, թարմութի՛ւն, կորո՛վ:

Հող ամեն մէկ բան սրտիս կժպտի,

Վիշտն ու թախիծը կվանէ մեկդի.

Հող գովիկ հով մը դէմս կփութայ

Եւ կուրծքս ազատ շունչ կառնէ կուտայ:

Իսկ անդրնդախոր ձորի հատակին,

Երբ իր պատերը պատռել քնիելով՝
Ժայռերու դէմքին փրփուր թքնելով՝
Կուռի կուլըրի ջուրը գետակին,
Սիրտս ալ, գետին պէս, կը խայտայ վետևվետ,
Եռալ փրփրիլ կուզեմ իրեն հետ:
Լեռնե՛ր, վե՛հ լեռներ, ձե՛զ գրել կուզեմ
Ոգետրութեան այս տենդերուս մէջ.
Թող ձեր ճակատը միշտ բա՛ց, միշտ վսե՛մ՝
Դառնայ գործերուս իդեալն անշէջ:
Դո՛ւն, լեռան աղջիկ, երգել կուզեմ քեզ,
Եւ թող երգիս հետ դուրս հոսի կրծքէս
Հոն երկար ատեն ծածկուած անյուշ
Թրթիռը սրտիս ու յոյզերս անուշ:
Եւ երնե՛կ երգս ալ պարզ ըլլայ, յստակ,
Ինչպէս ամէն բան լեռներուն վրայ.
Ինչպէս աղբիւրը, որ դուրս կծորայ
Մամռոտ ժայռերու գով խոռոչին տակ.
Ինչպէս լեռնային երկինքը վճիտ.
Ինչպէս լեռա՛ն կոյս, թնդիւնը լանջիդ:

Խոր ու թեք ձորի պատռած կողէն
Պարզուկ գմբեթ մը երկինք կմհտի,
Սուրևսուր սլախ մը լարուած աղեղէն,
Որ, ըսես, հիմա վեր թռչի պիտի:
Վարը Ազատը ժայռերու գրկին,
Դէմ կուտայ անոնց քարէ գգուանքին,
Խաղով, հեզանքով, քմահաճորէն,
Դուրս սողալ կուզէ Գեղամ սարերէն:
Բայց այդ ի վագքին մէջն իսկ խելագր,
Երբ կհանդիպի սուր սուրբ գմբեթին
Պատկառած քիչ մը կքաշուի մեկդին,
Որ մենաստանին շղատնայ խանգար:
Հա՛, հմայք ունի բնութեան ծոցին
Հին ու կիսավեր վանք մը առանձին:

Օ՛հ, որքան քա՛ղցր է ձմռան բանտէն վերջ՝
Բնութեան գիրկը խենթի պէս նետուիլ.
Ու խորհրդաւոր, սիրուն ձորին մէջ

Ե՛՛ սքանչանալ, ե՛՛ ոգետորուիլ:

Տար իրիկուն էր, երբ սայլն առաւ կանգ:

Վերջին ոլոր մ՛յալ, ու ձորը մտանք:

Գետն իր խու լերգով դէմերնիս փութաց,

Պագաւ երեսնիս իր շնչովը թաց:

Ճոխ ոտիներու թաւուտ ճիւղերէն

Սուր դայլայիկներ կտրուկ, թրթրռուն

Հանկարծ անձրեւեց մեր խոնջած գլխուն.

Մինչ գաղտնի ձայներ, որ մարդ կժաղրեն,

Ձորի այն բա՛րձր անձաւներէն կոյս

Նոյնը կկրկներ թովուած ականջնուս:

Նրբամէջ ձորը դիւթել կուզէր մեզ՝

Վառ ծաղիկներով պճնած դէմքն ու լանջ.

Փարթամ բնութեան իբրեւ նուրբ բեհեզ

Նետէր էր ուսին կրկնոց մը կանանջ.

Սակայն վախնալով, որ հովն անպատկառ

Ծածկոյթը մարմնէն կատակով բանար,

Անփոյթ դիրքով մը փաթթէր էր մէջքին

Փրփուրէ գետի արծաթէ գօտին:

Եւ շլացանք մենք այդ կոյս, ամօթխած

Ու թանր, գրգռոյիչ գեղեցկութենէն.

Մոռցանք դայրոցը, իր ժխորն ամէն՝

Նոր հրապոյրին անձնատուր եղած:

Եւ հաճոյալից խուսափուկ օրեր

Մեր անհոգ կեանքի օրոցքը կօրրէր:

Սակայն հոսուն են, վաղանց, քնածին

Ու դիրափոփոխ իղձերը մարդուն.

Ինչպէս ամառուան վառ վերջալոյսին

Նրբին, գունանգեղ ամպերն անկայուն:

Լրիւ ամիս մը դեռ հագիւ անցաւ,

Երբ ամենուս ալ զգալի դարձաւ,

Որ հնչուն գետը ու ձորը գողտրիկ

Ծարաւ սրտերնուս ալ չէր գար հերիք.

Ազատ երկնքի կզգայինք պահանջ.

Ծերուկ սարերուն տեսքը ալեհեր

Կարծես կքաշէր մեզ լեռներն ի վեր՝

Հո՛ն, ուր հարթակ էր փռուած գեղալանջ:

Եւ մենք վճռեցինք շաբաթ մըներկու

Լեռներուն վրա՛յ երթանք ապրելու:

Գիրք ու անկողին՝ պետքերնիս բոլոր՝

Իր թիկունքն առաւ մէկ նիհար, սեւ եգ.

Դե՛, օպա կերթանք մենք ոլորնմոլոր,

Մանուկ հոտաղ մը առաջնորդ է մեզ:

Դժուար էր ճամփան, նեղ, սեծ ու անանց,

Շուտով գիշերն ալ հասաւ անթափանց.

Երբ հանկարծ մօտէն խուլ որոտումներ

Դղրդեցուցին թէ՛ անդունդ, թէ՛ լեռ.

Եւ հոծ ամպերու թանձրութեան խորէն

Դուրս սողաց շանթը ճայթումով վայրագ,

Մինչդեռ փայլակը դողդոջ ու արագ

Մահատիպ լոյս մը կթափէր վերէն:

Իսկ մենք կելլենք միշտ լուռ ու շնչարգել

Մութին մէջ կորած այդ շափղն անել:

Ա՛հ, այդ գիշերը ո՞վ մոռնալ կրնայ.

Կատղած բնութեան ցասկէն դողահար՝

Միայնակ նետուած լեռներուն վրայ,

Երբ երկնքէն վար դժոխք կտեղար:

Չէ՛, ես կպաշտեմ այդ աղմուկն անսանձ,

Այդ ակնախըտիդ փայլը կարճակեաց,

Այդ կայծակները, երբ վագքերնուն տակ

Կպատռեն ամպերն այն կուտակեցուցաւ.

Բնութեան ահեղ այդ կըռուին հուժկու

Ես կերկրպագեմ ըսփշտակութեամբ.

Ան իմ թարմ սրտիս կուտայ իղձ ու թափ

Մեր կարճ կեանքին մէջ անդուզլ կռուելու.

Եւ մարդ ո՛ւժ կգգայ այդ վեհ վայրկեանին

ուխտել բիրտ ցնորք ու ա նկարելին□

Բայց թունդ աղմուկին քիչեքիչ յաջորդեց

Առատ անձրեւի զարկերն ու շառաշ.

Եւ մենք ուժասպառ, գավազաննուս հեց՝

Եզին հերովը կերթանք միշտ առաջ:

«Հասա՛նք», կավետէ մեզ առաջնորդնիս.

Ես սթափելով կնայիմ շորս դիս:

Մութին մէջ բան մը հագիւ նշմարած՝

Այն կողմ կշտապենք եզը գանց ըրած:

Բայց հաղթ, հովուական խոշոր շներու

Հաշն ու կլանշը մեզ ետ կվանեն.

մինչ հովիվները կելլեն վրանէն

Ապշած նայելով անկոչ հիւրերուն,

Որ գոռ փոթորկին, այդ սեւ գիշերին

իրենց այցի գալ մտածեր էին:

Դեռ փոթորիկը դուրսը կաղմկէ,

Եւ հորդ անձրեւն ալ կծեծէ անդու

Պարզուկ վրանին ծածկը թաղիքէ՝

Կազմելով երգ մը միակերպ ու խուլ:

Եւ այդ թացութեան երգը տխրագին

Օրոր կկարդայ մեր հոգնած մտքին.

Եւ մենք ուժաթափ, մրսած ու քնատ,

Անրձեւէն թռչած ու հովէն գունատ՝

Կննջենք խորունկ մանկական քնով:

Քունն ի՛նչ անուշ է լեռներուն վրայ,

Երբ փոթորիկն ալ դուրսը կգոռայ,

Երբ խեղճ վրանըդ կդողայ ահով,

Եւ անկողնիդ մէջ երբ բնագոգար

Կծիկ կդառնաս տաքնալու համար: